նորա թուրը, ուժգին հարուած մի տուաւ Ասլիկի վզին, որ անշունչ գետին փռուեցաւ։

Դարձաւ քրդերուն պոռաց։

—«Լ՝ օ՝ լ՝ քրդեր՝ աղէկ իշկէք՝ ձեր կատուն լէ պտի չը մնակնայ ընտրայ Ջանտիին...» ասաց՝ թողեց դիակն՝ գնաց։

Քրդերն՝ որ 150 վրան կային՝ տեսան որք բանը վատի պիտի գնայ՝ վրաններն արձակեցին՝ բարձան անցան Բինկէօլ։

Յակոյի ցեղը այժմ Կէօկչայ է. նորա հարստութիւնը՝ հիւրասիրութիւնը՝ և քաջութիւնը ցմիշտ կը պատմուի Բագրեւանդայ և Բասենի մէջ։

Յակէի ծովացեալ հարստութիւնը՝ որ ժողովրդեան բերնին մէջ ստեղծած էր «Յակէի թունդրայ մէջ դմէշ կը զվռնէր՝ ընդրա մալին հսապ չդէր։»

ԱԲՈՒԶԷԹ՝—Շատ անգամ այս գիւղիս վրայ լսած էի թէ հնութիւններ կան՝ 1884 օգոստոս 27-ին մեկնեցայ տեսնելու։ Մի օր Ջէտկան գիւղն մնացի՝ հետեւեալ առաւօտեան զով պահուն բարձրացայ քանի ընկերներով դէպի արեւմտեան զառիվերն՝ 2 ժամու չափ միշտ մերձ գնալով Կարնոյ Ճանապարհին՝ Ճանապարհէն բաժնուելով $^1/_2$ ժամու չափ ի հարաւ արեւմուտս փոքրիկ ձորակի մի մէջ տեսանք Աբուզէթ գիւղն՝ որ 10-ի չափ քուրդ տներէ բաղկացեալ է և տեսանք բերդն՝ որ գիւղի արեւմտեան հարաւն բարձրացած մեծ քարալեռան մի գագաթան վերայ կառուցուած է։ Հարցուցինք ռիսբիին տունը. իջեւանեցանք՝ մեր ձիանքը կապեցինք՝ հանգստացանք։

Գիւղի մէջ մի քիչ շրջեցայ՝ տեսայ բաղմաթիւ